— Նա մի դերվիշ մարդ է, — պատասխանեց երիտասարդը, — նրանից ոչ ոք չի վախենում:

— Իսկ առաջնորդից վախենո՞ւմ են:

— Ի հարկէ, վախենում են:

Երեցփոխանը «իհարկէ» բառը շատ էր գործ ածում, եւ նրա հետ աջ կողմի աչքը միշտ խորհրդաւոր կերպով խփում էր խօսելու ժամանակ: Ես պատասխանեցի.

— Առաջնորդից, այո՛, վախենում են, բայց Հայրիկին սիրում են:

— Ո՞վ է սիրում, — ասաց նա վրդովուած ձայնով, — ցոյց տոեցէք մի հայ էֆենդի, մի հայ բէկ, վերջապէս, մի փոքր ի շատէ նշանակութիւն ունեցող մարդ, որ նրան սիրելիս լինէր: Ժողովրդի գլխաւորները դրանք են: Նրան սիրում են գռեհիկ գիւղացիները կամ քաղաքի աղքատ-ողքատ արհեստաւորները, որոնց տները մտնում է եւ բոլորի քէֆը հարցնում է: Նրան ի՞նչ կվայելէ այդ տեսակ մարդկանց դուռը բաց անել:

Նա մի մեծ վանքի վանահայր է, պէտք է իր հաւասար մարդկանց հետ նիստուկաց անէ:

— Հէնց Յիսուս Քրիստոսն էլ մեզ նման աղքատ արհեստաւորների դուռն էր բաց անում եւ իրան միշտ բեկերից, էֆենդիներից հեռու էր պահում, — պատասխանեց այնտեղ նստած արհեստաւորը, որին, ինչպէս երեւում էր, զայրացրին երեցփոխանի վերջին խօսքերը:

— Բայց նրանից ո՞վ էր վախենում, — հարցրեց երեցփոխանը, ինքն եւս բարկանալով եւ այս անգամ սխալմամբ ձախ կողմի աչքը խփելով: — Եթէ նա մեծ մարդկանց հետ նիստ ու կաց անէր, նրանից էլ կը վախենային:

Ես չկարողացայ համբերել եւ կտրեցի նրա խօսքը.

— Այստեղ ի՞նչ վախենալու կամ չվախենալու հարկաւորութիւն կայ: Հայրիկը հոգեւոր հայր է, միթէ՞ հօրից պէտք է վախենան որդիքը:

— Ի հարկէ, պէտք է վախենան: Եթէ քո որդիքը քեզանից չվախենան, կարո՞ղ ես նրանց կարգի ու կանոնի մէջ պահել:

Ինչպէս ընտանեկան կեանքի մէջ բռնակալ հայրը երկաթի գաւազանով էր իշխում, նոյն կառավարութեան ձեւը դրանք սիրում էին տեսնել եւ հասարակական կեանքի մէջ: Այդ էր պատճառը, որ երեցփոխանը իր բերած օրինակը՝ հօր եւ որդիների յարաբերութեան վերաբերութեամբ՝ բաւական յաջող գտնելով, եւ դէպի ինձ դառնալով, աւելացրեց.